ՄԱՅՐ ԱԹՈՌ

Կ. Պոլսոյ Ազգային հիւանդանոցի պատուարժան Հոգաբարձութիւնը նոր տարուայ շնորհաւորութեան առթիւ փառակազմ Օրացոյցներ էր ուղարկել Ն. Ամենապատուութեան Տ. Տեղակալին։ Ի պատասխան Հոգաբարձութեան Ս. Տեղակալը շնորհակալութեան և օրհնութեան թղթի հետ՝ Սինոդի որոշմամբ ուղարկեց հարիւր ռուբլի Մայր Աթոռի գանձարանից յօգուտ Տաճկահայոց այդ կարևոր հաստատութեան։

Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը խոստացել էր Մ. Աթոռի տպարանի համար հոգալ անհրաժեշտ պակաս մեքենաները։ Տպարանական վարչութեան բացատրական յայտարարութեան հիման վերայ, Ն. Ամենապատուութիւն Տ. Տեղակալը մի գրութեամբ դիմեց վերոյիշեալ խորհրդին, առաջարկելով ուղարկել՝ ա) Հարթիչ մեքենայ, որ կարժենայ մօտ 700 ռուբլի, բ) Գիդրաւլիկեան ճնշիչ մեքենայ մօտ 3000 ռուբլի, գ) թերթանոց, փոքրիկ Աուսբուրգի սիստեմի տպիչ մեքենայ մօտ 1200 ռուբլի, դ) մի հատ Վիկտորիա-Ամերիկանկա 1600 ռուբլու արժողութեամբ, պատկերներ և ուրիշ գեղարուեստական գործեր տպելու համար՝ ընդամենը 6500 ռուբլու արժողութեամբ։ Անհրաժեշտ են տպարանի համար նոր մայրեր և եւրոպական ձայնանիշների ամբողջ կոմպլեկտ՝ երաժշտական աշխատասիրութիւններ ևս տպագրելու։ Համարձակւում ենք յուսալ, թէ Պետերբուրգի պատուարժան եկեղ. խորհուրդը կհոգայ այս պակասը, որ նորա կողմից լաւագոյն ընծան կլինի Մ. Աթոռի նիւթապէս այս անձուկ ժամանակում։

Ն. Ամենապատուութիւն Տ. Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեան ներկայ թուականի յունուարի

17-ին մի գրութեամբ դիմել էր յայտնի գրամատէր և բարեգործ պ. Աղէքսանդր Մանթաշեանին և խնդրել էր յանձն առնել Մայր տաճարի տանիքի նորոգութիւնը, որ փչացած լինելու պատճառով անձրևի ջրերը սուզում էին և սաստիկ խոնաւութիւն յառաջացնում։ Յատկապէս ՀԱՍՍՈՒԱԾ է Գէորգ կաթուղիկոսի շինած թանգարանի տանիքը մինչ այն աստիճան, որ խոնաւութիւնից կարող էին վտանգի ենթարուել այնտեղ պահուած թանգարանի զգեստները ու հնութիւնները։ Այս ամենի մասին Տեղակալ սրբազանը յայտնելով իւր նամակի մէջ, խնդրում էր հոգալ տանիքի նորոգութեան ծախսերը, տաճարի հիմնական նորոգութիւնը թողնելով պ. Մանթաշեանի հայեցողութեան։ Այդ նորոգութիւնը առաջարկել էր կատարել բարերարի նշանակած անձի հսկողութեամբ և յատուկ ճարտարապետի ձեռքով ինչ ձևով և ինչ նիւթից ինքը յարմար կհամարէր։

Այս գրութեան պատասխանն ստացաւ Ն. Ամենապատուութիւնը վերջին օրերս արտասահմանից, որով պ. Մանթաշեանը սիրով յանձն է առնում իրեն եղած առաջարկութիւնը։ Նա աւելորդ է համարում իւր կողմից առանձին հսկող և ճարտարապետ նշանակել, այլ խընդրում է մի յանձնաժողով կազմել Տ. Տեղակալի նախագահութեամբ, որին պիտի մասնակցեն Տ. Կոմիտաս վարդապետ, որ նորա սանն է, և երկու կամ երեք հոգի ևս, որոնց կնշանակէ Տեղակալ սրբազանը։ Յայտնում է նոյնպէս, որ կարդացել է պ. Դաւիթ Խարազեանի ձեռքով Տփխիսից հեռագրեմ Մ. Աթոռ փոխադրել 40,000 ռուբլի նորոգութեան համար։ Ապա պ. Մանթաշեանը իւր խնդակցութիւնն է յայտնում Սրբազանի տեղակալական պաշտօնի համար և ուրախ է, որ նորա տեղակալութեան օրով պէտք է կատարուի Մ. տաճարի նորոգութիւնը, որ իւր ամենամեծ ցանկութիւնը եղած էր։

Այսպիսով Տ. Տեղակալի խօսքերը, որ նա արտասանել էր հանգուցեալ կաթուղիկոսի թաղման առթիւ հաւաքուած պատգամաւորների առաջ, թէ «մի անչուք տա-

ճար ունինք և անապահով ճեմարան», որոնց վերայ հայ ժողովուրդը իւր ուշադրութիւնը պիտի դարձնէ փոքր ի շատէ կարգաւորեալ կերպով նորընտիր կաթուղիկոսին յանձնելու համար, արձագանգ է գտնում Մ. Աթոռի հարազատների սրտում։ Ցուսանք, թէ Թիֆլիսում, Բագուում և Ն. Նախիջևանում կազմուած յանձնաժողովներն էլ կկարողանան այնքան նպաստ հասցնել ճեմարանին, որ առանց նեղութեան կկառավարուի աթոռի թափուր ժամանակը։

Ամերիկայի Ս. Ֆրանցիսկոյ քաղաքում անցեալ թուականի վերջերին այնտեղի հայերի ձեռքով գրադարանական մի միութիւն էր կազմուած, որի կանոնադրութեան համաձայն ընկերութեան փակուելուց յետոյ, մնացած գումարի կէսը պիտի յատկացուէր բարեգործական նպատակի։ Տարաբաղդաբար Միութեան կեանքը շատ կարճատև եղաւ, շատ քիչ անդամներ ունենալու պատճառով։ Ընկերութեան ատենապետն այժմ Մ. Ուլուսեան Ն. Ամենապատուութեան անունով ուղարկել է 43 ր. 72 կ. Ռուսահայ սովելոյ համար։ Տ. Տեղակալը այս գումարը փոխադրեց Թիֆլիս Տ. Գարեգին Արքեպիսկոպոսին, Նպաստամատոյց Յանձնաժողովին յանձնելու համար։

Ն. Սրբազնութիւն Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս, Երևանի փոխ թեմակալը, որ Տ. Տեղակալի կողմից գնացել էր Թիֆլիզ Փոխարքայի դիւանում մասնակցելու դպրոցական կանոնադրութեան յանձնաժողովի աշխատութիւններին՝ փետր. 13-ին Մայր Աթոռ եկաւ, ժողովները մինչև Ապրիլ յետաձգուելու համար։

Կարսի փոխանորդ Տ. Մամբրէ վարդապետի հրաժարուելու պատճառով, Սինոդի որոշմամբ Տ. Տեղակալը առաջադրեց Երևանի թեմակալի Տ. փոխանորդին ընտրութիւն նշանակել նոր յաջորդի համար։